

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ԹԵՆՐԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հունվարի 2013թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասարանի Նանրապետության արդարադատության նախարարի փեղակալ Ե. Կիրակոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի նոյեմբերի 12-ին Թեհրանում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության եւ Իրանի Իսլամական Նանրապետության միջեւ դատապարտյալների փոխանցման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 17.12.2012թ. ՆՏ սահմանադրական դափարանում մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասփանի Նանրապետության սահմանադրական դափարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Նայասփանի Նանրապետության եւ Իրանի Իսլամական Նանրապետության միջեւ դափապարտյալների փոխանցման մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Նամաձայնագիր/ ստորագրվել է Թեհրանում 2012թ. նոյեմբերի 12-ին՝ ՆՏ արդարադատության նախարարի կողմից:

Նամաձայնագիրը կարելի է կարել է ՆՏ եւ ԻԻՆ տարածքներում գտնվող երկու պետությունների քաղաքացիներ հանդիսացող դափապարտյալների թվի աճով, ինչպես նաեւ դափապարտյալների՝ սահմանված կարգով փոխանցման իրավական կարգավորման անհրաժեշտությամբ:

2. Քննության առարկա Նամաձայնագիրը բաղկացած է նախաբանից եւ 22 հոդվածներից:

Նամաձայնագրի նախաբանին համապատասխան՝ դրա հիմնական նպատակներն են՝

- զարգացնել երկու պետությունների համագործակցությունը քրեական իրավունքի ոլորտում՝ հիմք ընդունելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերն ու մարդու իրավունքների հիմնարար սկզբունքները,

- նպաստել արդարադատության նպատակների իրագործմանը, դափապարտյալների սոցիալական վերականգնմանը եւ նրանց բնականոն կյանք վերադառնալուն:

Նամաձայնագրի 1-ին հոդվածը նվիրված է դրանում օգրագործված մի շարք եզրույթների սահմանումներին, իսկ 2-րդ հոդվածը՝ Նամաձայնագրի ընդհանուր սկզբունքներին:

Նամաձայնագիրը նախատեսում է, որ Կողմերը **հարցման** հիման վրա միմյանց փոխանցում են մյուս Կողմի քաղաքացի հանդիսացող դափապարտյալներին՝ նրանց նկատմամբ նշանակված պարտի մնացած մասը կրելու համար: Կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել մյուս Կողմին՝ դափապարտյալի փոխանցման հնարավորությունը քննարկելու խնդրանքով: Սահմանված է նաեւ, որ Նամաձայնա-

գիրն իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից՝ անմիջականորեն կամ դիվանագիտական ուղիներով, ընդամին, Տայասրանի Տանրապետության կողմից իրավասու մարմին է ճանաչվում ՏՏ արդարադատության նախարարությունը:

Ռաբապարտյալի փոխանցման գործընթացն սկսելու հիմք է հանդիսանում դաբապարտյալի, նրա մերձավոր ազգականների կամ օրինական ներկայացուցիչների, ինչպես նաև Կողմերից մեկի իրավասու մարմնի հարցումը՝ հասցեագրված մյուս Կողմի իրավասու մարմնին /հոդված 4/:

Տամաձայնագրի 6-րդ հոդվածն ամրագրում է փոխանցման հսրակ եւ սպառիչ իրավապայմանները, որոնցից որեւէ մեկի բացակայության դեպքում դաբապարտյալը չի կարող փոխանցվել /Տամաձայնագրի 7-րդ հոդվածի 1-ին կետ/:

Խնդրո առարկա Տամաձայնագրի 8 եւ 9-րդ հոդվածները նախարեսում են Կողմերի միջեւ համապարասխան րեղեկարվության փոխանակման առնչությամբ սրանձնվող պարրավորությունները եւ դաբապարտյալի փոխանցման վերաբերյալ գրավոր հարցմանը կցվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Ի դեպ, դաբապարտյալը չի կարող փոխանցվել նաև այն դեպքում, երբ հայցող Կողմը չի կարարել Տամաձայնագրի 9-րդ հոդվածի պահանջները, այն է՝ հարցմանը չի կցել անհրաժեշտ փաստաթղթերը:

Տամաձայնագիրն առանձնակի կարեւորում է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր Կողմ պեպք է լիարժեք հավասրիանա, որ դաբապարտյալն /մերձավոր ազգականները կամ օրինական ներկայացուցիչները/ անվիճելիորեն համաձայն է փոխանցմանը եւ լիովին գիտակցում է դրա իրավական հետեւանքները:

Տամաձայնագիրը սահմանում է, որ այն ենթակա է կիրառման նաև Կողմերի դաբարանների կողմից մինչեւ սույն Տամաձայնագրի ուժի մեջ մրնելը դաբապարտված անձանց նկարմամբ:

Ըստ Տամաձայնագրի 21-րդ հոդվածի՝ Կողմերը պարրավորվում են ծագած հնարավոր րարաձայնությունները լուծել անմիջական բանակցությունների միջոցով կամ դիվանագիտական ուղիներով:

Տամաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով եւ ուժի մեջ է մրնում Կողմերից յուրաքանչյուրի՝ համապարասխան ներպերական ընթացակարգերի կարարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով սրանալու օրվանից /հոդված 22/:

3. Նամաձայնագրին համապատասխան՝ Նայասրանի Նանրապետությունը փոխադարձության սկզբունքով սրանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- հոգալ որպես կարարող Կողմ դադարապարտյալի փոխանցման հետ կապված բոլոր ծախսերը՝ այն պահից սկսած, երբ դադարապարտյալը փոխանցվում է ՆՏ –ին.

- փոխհատուցել վերանայման կամ դադարանի կողմից նոր դարավճիռ ընդունվելու արդյունքում դարավճիռը վերացնելու դեպքում դադարապարտյալին նախորդ պարտի հետևանքով պարճառված վնասները, եթե նախորդ դարավճիռը կայացրել է ՆՏ դադարանը.

- հոգալ որպես հայցող Կողմ դադարապարտյալին երրորդ պետության փարածքով փարանցիկ փեղափոխման ծախսերը.

- վերաբերվել փոխանցվող դադարապարտյալին մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան.

- ծավալել իրանական Կողմի հետ համարեղ հնարավորինս լայն համագործակցություն դադարապարտյալի փոխանցման առնչությամբ.

- երաշխավորել, որ փոխանցման հարցումը բավարարելու կամ մերժելու մասին որոշումը կկայացվի Նամաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված փաստաթղթերը սրանալու օրվանից հետո առավելագույնը վաթսուն օրվա ընթացքում, ինչպես նաև երաշխավորել, որ դադարապարտված անձը, նրա մերձավոր ազգականները կամ օրինական ներկայացուցիչները, եթե այդպիսիք կան, ինչպես նաև հայցող իրանական Կողմը գրավոր կտեղեկացվեն ընդունված որոշման մասին.

- երաշխավորել, որ փոխանցման հարցումը մերժելու դեպքում մերժման պարճառները կներկայացվեն գրավոր.

- որպես դադարապարտող Կողմ թույլ տալ իրանական Կողմից նշանակված պաշտոնյային՝ մինչև փոխանցումն անձամբ սրուգել, որ դադարապարտյալի՝ փոխանցման որոշումն ինքնակամ է ընդունվել եւ նա իրագել է դրա հետևանքերի մասին.

- ապահովել որպես կարարող Կողմ դարավճի ամբողջական կարարումը՝ առաջնորդվելով ՆՏ օրենսդրությամբ եւ երաշխավորելով, որպեսզի դադարապարտյալի պայմանները չվարթարանան փոխանցումից հետո.

- երաշխավորել, որ որպես կարարող Կողմ հայկական Կողմը սահմանափակված լինի դադարապարտող իրանական Կողմի սահմանած պարտի իրավական էությունը ու փետողությամբ.

- չփոխարինել որպես կապարող Կողմ դափապարտյալի նկատմամբ իրանական Կողմի կայացրած ազապագրկման դափավճիռն այլ պատժատեսակով, ինչպես նաև չկրճարել ազապագրկման փետողությունը՝ հաշվի առնելով Նամաձայնագրի 14-րդ հոդվածի 4-րդ կետը.

- երաշխավորել, որ պատժի մնացած մասը կրելու համար ՏՏ-ին փոխանցված դափապարտյալը նույն հանցագործության համար ՏՏ-ում մեկ անգամ եւս չենթարկվի քրեական հետապնդման:

4. ՏՏ սահմանադրական դափարանն արձանագրում է, որ Նամաձայնագիրը պարտավորեցնելով Կողմերին փոխանցվող դափապարտյալին վերաբերվել մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան՝ ըստ էության, իրավական լրացուցիչ գործնական հնարավորություն է ընձեռում քրեական հանցագործությունների համար ազապագրկված օտարերկրյա քաղաքացիներին սահմանված պատիժը կրել իրենց քաղաքացիության պետության փարածքում, դրանով իսկ հնարավորինս բավարար պայմաններ ստեղծելով եւ նպաստելով նրանց սոցիալական վերականգնմանը, լիարժեք հասարակական կյանք վերադառնալուն, իսկ վերջնական արդյունքում՝ արդարադափության եւ պատժի նպատակների իրագործմանը:

Բացի դրանից, Նամաձայնագրի դրույթները համահունչ են նաև Նայասփանի Նանրապետության սփանձնած միջազգային պարտավորություններին, մասնավորապես, «Դափապարտյալների փոխանցման մասին» 1983թ. մարտի 21-ին Սփրասբուրգում ստորագրված կոնվենցիայի դրույթներին, որը վավերացվել է ՏՏ Ազգային ժողովի 2001թ. մարտի 21-ի Ն-161-2 որոշմամբ /ՏՏ սահմանադրական դափարանի 2000թ. նոյեմբերի 24-ի ՍԴՈ-264 որոշումը/:

Այսպիսով, ՏՏ սահմանադրական դափարանն արձանագրում է, որ Նամաձայնագրում ամրագրված եւ վերը հիշատակված դրա անմիջական նպատակներն ու դրույթները լիովին ներդաշնակ են եւ ուղղակի բխում են միջազգային մարդասիրական իրավունքի նորմերից, մարդու իրավունքների հանրաճանաչ հիմնարար սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դափարանի մասին»

Նայասարանի Նանրապեղության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապեղության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2012 թվականի նոյեմբերի 12-ին թեհրանում ստորագրված՝ Նայասարանի Նանրապեղության եւ Իրանի Իսլամական Նանրապեղության միջեւ դատապարտյալների փոխանցման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապարասխանում են Նայասարանի Նանրապեղության Սահմանադրությանը:

2. Նայասարանի Նանրապեղության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

22 հունվարի 2013 թվականի  
ՍԴՈ-1070